

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Օ Ր Ե Ն Ք Ո

### ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

#### Հոդված 23. Գերիշխող դիրքի մասին որոշման կայացումը

1. ~~Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական-Մրցակցության պաշտպանության~~ հանձնաժողովի հետ խորհրդակցելով Կարգավորողը սահմանում է կարգավորման ենթակա էլեկտրոնային հաղորդակցության շուկաները և որոշում է, թե հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցեր կամ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող որ օպերատորները և որ մատուցողները սույն օրենքի իմաստով ունեն գերիշխող դիրք: Այս կապակցությամբ Կարգավորողն առնվազն երկու ամիս առաջ հրապարակում է որևէ օպերատորի կամ ծառայությունների մատուցողի դիրքը գերիշխող ճանաչելու կամ նման որոշման առկայության դեպքում՝ ոչ գերիշխող ճանաչելու իր մտադրության մասին և ընդունում գրավոր մեկնաբանություններ տվյալ օպերատորից կամ ծառայությունների մատուցողից և շահագրգիռ անձանցից:

2. Կարգավորողը կարող է օպերատորին կամ ծառայություններ մատուցողին ճանաչել որպես գերիշխող դիրք զբաղեցնող որոշ ծառայությունների և (կամ) աշխարհագրական տարածքների կապակցությամբ, իսկ ուրիշ ծառայությունների կամ աշխարհագրական տարածքների առումով՝ որպես ոչ գերիշխող:

3. Ցանկացած շահագրգիռ անձ կարող է դիմել, որպեսզի Կարգավորողը նախաձեռնի սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործընթացը որևէ օպերատորի կամ ծառայություններ մատուցողի նկատմամբ:

#### Հոդված 24. Երաշխիքները

1. Կարգավորողը կարող է սահմանել կանոններ (այսուհետ՝ մրցակցության երաշխավորման կանոններ), որոնցով՝

1) կարգելի հակամրցակցային գնորոշումը և այլ երևույթներ.

2) կապահանջի գերիշխող օպերատորից կամ ծառայություններ մատուցողից, որպեսզի նա մրցակցային կարգով հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցի միայն մեկ կամ ավելի, բայց իրենից լիովին առանձնացված դուստր ձեռնարկությունների կամ փոխկապակցված անձանց միջոցով.

3) կապահանջի գերիշխող օպերատորից կամ ծառայություններ մատուցողից, որպեսզի նա կառուցվածքային առումով առանձնացնի իր գերիշխող գործունեությունը մրցակցային գործունեությունից.

4) կապահանջի գերիշխող օպերատորից կամ ծառայություններ մատուցողից, որպեսզի նա սահմանափակի գործարքները, կամ տեղեկատվության փոխանակումը, կամ աշխատողների համատեղումը, կամ ձեռնարկի այլ քայլեր, որոնք կհամարի ողջամիտ և անհրաժեշտ՝ մրցակցությունը երաշխավորելու համար.

5) եթե այլ միջոցները չեն պաշտպանում մրցակցությունը, պահանջել գերիշխողից իր մեկ կամ մի քանի փոխկապակցված անձանց հետ խզել տնտեսական կապերը:

2. Կարգավորողն իրավասու է, խորհրդակցելով ~~Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական Մրցակցության պաշտպանության~~ հանձնաժողովի հետ, մշակել ուղեցույցներ հետևյալի վերաբերյալ՝

1) հակամրցակցային գործելակերպի այն տեսակները, որոնց նկատմամբ կիրառվում են մրցակցության երաշխավորման կանոնները.

2) նմանօրինակ գործելակերպի նկատմամբ մրցակցության երաշխիք կիրառելու կամ չկիրառելու մասին որոշում կայացնելու կարգը:

3. Կարգավորողը պարտավոր է մրցակցության երաշխավորման կանոններ հրապարակել, եթե բավարար է համարում, որ՝

1) դրանք անհրաժեշտ են օպերատորի կամ ծառայություններ մատուցողի կողմից գերիշխող դիրքի չարաշահումը կամ այդ օպերատորի կամ ծառայություններ մատուցողի կողմից ցանկացած այլ հակամրցակցային գործելակերպը բացահայտելու կամ կանխելու համար.

2) Կարգավորողի տրամադրության տակ չկան որևէ այլ գործուն միջոցներ, որպեսզի այն համարժեքորեն արձագանքի նման չարաշահմանը կամ գործելակերպին:

4. Սույն օրենքի որևէ դրույթ նպատակ չի հետապնդում կանխել կամ սահմանափակել որևէ անձի՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» կամ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների շրջանակներում պաշտպանությունից օգտվելու նպատակով հայցով դատարան դիմելու իրավունքը: